ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության տնտեսական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության ենթակառուցվածքային ոլորտների բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Ելենա Խաչատրյանի՝ 2024թ. հուլիսի 15-ից հուլիսի 19-ը ներառյալ ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Ելենա Խաչատրյան, տնտեսական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության ենթակառուցվածքային ոլորտների բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2024թ. հուլիսի 15-ից հուլիսի 19-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը.

Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Գենդերային անհավասարություն և մակրոտնտեսություն» թեմայով դասընթացին՝ մասնագիտական գիտելիքները զարգացնելու նպատակով:

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի շրջանակներում քննարկվել են հետևյալ թեմաները.

- Գենդերային բյուջետավորում և ֆինանսների նախարարության դերի կարևորությունը գենդերային բյուջետավորման ներդրման գործում,
- Գենդերային անհավասրությունը և դրա մակրոտնտեսական հետևանքները,
- Գենդերային անհավասարություն և վարվող քաղաքականություն,
- Գենդեր, բարձր վարձատրություն և չվճարվող աշխատանք,
- Գենդերային անհավասարություն և ֆինանսական հասանելիություն,
- Գենդերային անհավասարություն և օրենսդրական բարեփոխումներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի շրջանակներում ներկայացվել են տարբեր երկրներում գենդերային անհավասարության դրսևորումները, վերլուծվել է վերջիններիս ազդեցությունը երկրի/ների տնտեսության վրա: Քննարկվել է միջազգային փորձը և ձեռքբերումները ինչպես գենդերային անհավասարության խնդիրների լուծմանն ուղղված, այնպես էլ գենդերային բյուջետավորման շրջանակներում ձեռքբերումների վերաբերյալ: Ներկայացվել է

հանրային ֆինանսների կառավարման կենսացիկլը և վերջինիս շրջանակներում գենդերային բյուջետավորման գործիքակազմը, ընդգծվել է ֆինանսների նախարարության դերի կարևորությունը գենդերային բյուջետավորման շրջանակներում:

Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ՝ տեսական գիտելիքների պրակտիկ կիրառման նպատակով: Իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ, պատրաստվել են շնորհանդեսներ, որոնք ներկայացվել և քննարկվել են դասընթացի մասնակիցների հետ: Դրա հետ մեկտեղ, շնորհանդեսի միջոցով դասընթացի մասնակիցներին և դասընթացավարներին ներկայացվել են դասընթացն ամփոփող և խմբի կողմից կատարված գործնական աշխատանքների, քննարկումների արդյունքները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

24.07.2024թ.